ԿԱՐԾԻՔ

Շահեն Շանթի Հարությունյանի «Քաղաքական այլախոհությունը Խորհրդային Հայաստանում 1960-1980-ական թվականների կեսերին» ատենախոսության մասին:

Թեման անչափ արդիական է և պահանջված:

Ատենախոսության կառուցվածքը նույնպես հաջողված է:

Հեղինակը լավ է տիրապետում թեմայի նրբություններին և հանրության դատին է ներկայացրել հետաքրքիր, պահանջված ուսումնասիրություն:

Ատենախոսության կառուցվածքը այնպիսինն է, որ հեղինակը կարողացել է իր աշխատանքում ընդգրկել և քննարկել թեմայի վերաբերյալ հիմնական հարցերը:

Հեղինակին հաջողվել է աշխատության ներածությունում հիմնավորել նման թեմայի ուսումնասիրման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

Նա քաջատեղյակ է այդ հարցում հրապարակի վրա եղած գիտական գրականությանը, ուսումնասիրություններին, խորը վեր է լուծել, գնահատել և նաև հիմնավորել իր կողմից կատարածի կարևորությունը, որը գալիս է լրացնելու՝ հրապարակի վրա եղած գիտական ժառանգությունը, ինչն էլ պահպանում է սերունդների կապը և իր կատարածը փոխանցում հաջորդ սերունդներին:

Եվ որքան էլ հեղինակը՝ ինչպես ասացինք քաջատեղյակ է քննարկվող հարցի վերաբերյալ եղած գիտական ժառանգությանը, ուսումնասիրություններին և այլն, միևնույն է, թեման անսպառ է, պահանջված, որի կարևորությունը հեղինակը հիմնավորել է, և կարևորել աշխատության ներածությունում:

Հեղինակը նաև ճիշտ է նկատում, որ երկար տասնամյակներ Խորհրդային Միությունում արգելված էր այլախոհական մտածողությունը, քանզի Ստալինյան բռնապետական կարգը ստիպում էր մտածել, գործել «Վերևից» տրվող կանոններով, որին չենթարկվողները դատապարտվում էին ցմահ բանտարկության, կամ ենթարկվում մահապատժի, այլ կարգի բռնությունների, սահմանափակումների, ազրեսիաների և այլն:

Ներկայացնելով այդ ամենը հեղինակը ճիշտ է նկատում, որ այդ հարցում ամեն ինչ փոխվեց, երբ սկսվեց պատմությանը հայտնի «Խրուշչովյան ձնհալը», որը հնարավորություն

տվեց եթե ոչ ամբողջությամբ, ապա մասամբ ազատ մտածելու, խորհելու և սեփական կարծիքը հայտնելու՝ որքան էլ որ իներցիայի ուժով երկրում իշխում էին հին կարծրատիպերը:

Հեղինակը ճիշտ է նկատում, որ Միության մասշտաբով երկրում սկսեց ձևավորվել թե՛ բացահայտ, թե՛ ընդհատակյա այլախոհական շարժում, որը սկսեց կարևոր դեր խաղալ մարդկանց մտորումների, դատողությունների վրա:

Դեռ ավելին, այդ երևույթը սկսեց կարևոր դեր խաղալ մեր երկրի անկախության համար պայքարում:

Ելնելով դրանից, հեղինակը կարևորել է թեմայի գործնական նշանակությունը: Նա ներկայացնում է այլախոհությունը, այլախոհական պայքարը՝ գտնելով, որ այդ երևույթը ևս իր դերը խաղաց Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման հարցում:

Եվ, քանի որ, այն դեռ երկար ճանապարհ ուներ, հեղինակը խոսում է «Խրուշչովյան հալոցքի», կամ որ շատ տարածված է «Խրուշչովյան ձնհալի» մասին: Նաև ասենք, որ այդ հալոցքը հեշտությամբ և ազատ չի գործել, այլ մեծ մասամբ ընդհատակյա պայմաններում:

Հեղինակը մեծ աշխատանք է կատարել. Ծանոթացել, վերլուծել այլախոհական շարժման գործիչների ընդհատակյա պայմաններում կատարած աշխատանքին և գիտական փաստերի հիման վրա ստեղծել արժեքավոր հետազոտություն:

Հեղինակը կարևորել է աշխատանքի աղբյուրագիտական հենքը, որի հիման վրա ընթերցողների դատին է հանձնվել անչափ հետաքրքիր աշխատանք:

Նա ծանոթ է քննարկվող հարցի վերաբերյալ եղած պետական, մասնավոր, անձնական, արխիվային նյութերին, նաև ուսումնասիրել է հանրապետության Ազգային արխիվում այդ հարցի վերաբերյալ եղած նյութերը:

Հեղինակը միաժամանակ ցույց է տվել, որ Հանրապետության Ազգային Անվտանգության ծառայությունը առ այսօր փակի տակ է պահում իր տրամադրության տակ գտնվող, քննարկվող թեմայի վերաբերյալ եղած գիտական ժառանգությունը, նյութերը, որոնք հնարավորություն կտային ավելի մանրամասն բացահայտելու այդքան օգտակար, անչափ կարևոր ժառանգությունը:

Քանի որ այլախոհներից շատերը ենթարկվել են բանտարկության, այդ ընթացքում ոչնչացվել են նյութերը, բանտային նամակները, գրությունները, հարցաքննությունները, որոնք ևս անչափ կարևոր աղբյուրներ են այլախոհական շարժման մանրամասներն ուսումնասիրելու համար:

Նաև ասենք, որ հեղինակն այդ հարցում ունի այն առավելությունը, որ իրենց տանը այլախոհական մթնոլորտ կար՝ հանձինս իր պապի՝ Շահենի, որի անունը ինքն արժանի ձևով կրում է և հայրը՝ Շանթը, ով իր այդ քայլերի համար հաճախ է ենթարկվել բռնությունների, բանտարկության, այլ կարգի հետապնդումների, սահմանափակումների:

Հեղինակը շատ լավ ծանոթ է այլախոհական շարժման ակտիվ գործիչներից Պարույր Հայրիկյանի հրապարակած աշխատանքներին, որոնք ևս նա ուսումնասիրել է, գնահատել և ներկայացրել ընթերցողներին:

Նույնը կարող ենք ասել այլախոհ Վարդան Հարությունյանի մասին, ով հրատարակել է «Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում», «Քաղբանտարկյալի պատմությունը» աշխատությունները, որոնց ուսումնասիրումը ևս նպաստել է աշխատանքի մանրակրկիտ հետազոտմանը:

Հեղինակը նաև կարևորել է իր գիտական ղեկավար Էդիկ Մինասյանի այդ հարցի վերաբերյալ հրատարակած հոդվածները, որոնք նա մանրամասնորեն վեր է լուծել և գնահատել:

Տեղին է նաև հիշել, որ այդ հարցում որոշակի վաստակ ունի Ամատունի Վիրաբյանը, ով այդ առիթով հրատարակել է «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով» արժեքավոր աշխատությունը, որտեղ ևս քննարկել և բացատրել է այդ հարցերը: Ի դեպ ասեմ, որ ես էլ եղել եմ Ամատունի Վիրաբյանի դոկտորական ատենախոսության ընդդիմախոսներից մեկը, այնպես որ լավ ծանոթ եմ այդ աշխատանքին:

Եվ վերջապես, բազմաթիվ այլ այլախոհների կարծիքը ներկայացնելուց զատ հեղինակը կարևորել է իր այլախոհ պապիկի՝ Շահեն Հարությունյանի կատարած այլախոհական գործունեությունը, որը փոխանցել է նաև իր որդուն՝ Շանթին, նա էլ իր թոռնիկին՝ կրտսեր Շահենին, ով ձեր դատին հանձնված ատենախոսության հեղինակն է:

Նախ ասենք, որ հեղինակը շատ լավ է տիրապետում քննվող թեմայի մանրամասներին և իր ասելիքը տեղավորել է աշխատանքի չորս գլուխներում և հասկանալի է՝ ենթահարցերում:

Հեղինակը առանձին գլուխ է նվիրել քաղաքական այլախոհությանը, ընդհատակյա կազմակերպությունների ձևավորմանը՝ ինչպես Միությունում, այնպես էլ մեր հանրապետությունում:

Նա այլախոհական շարժումը բաժանել է փուլերի, էտապների, որոնցում ցույց է տվել այդ շարժման առանձնահատկությունները:

Հեղինակը այլախոհական շարժման պատմությունը, հատկապես մեր հանրապետությունում, հասցրել է մինչև Գորբաչովյան «Վերակառուցման» քաղաքականության ժամանակաշրջան, հատկապես կարևորել «Մետրոյի գործը», որում ցույց է տվել, որ 1977-1978 թթ. Մոսկվայում մետրոյի պայթեցման գործում մեղադրանքներ տրվեցին հայ այլախոհներ Ստեփան Զատիկյանին, Հակոբ Ստեփանյանին և Զավեն Բաղդասարյանին, որոնց նկատմամբ առանց դատական նորմերի պահպանման, առանց ապացույցների կիրառեցին մահապատիժ:

Ներկայացնելով այդ ամենը հեղինակը ցույց է տվել, որ նման դաժանությունը հետապնդում էր մեկ նպատակ՝ տեղին, թե անտեղի դատաստան տեսնել այլախոհների նկատմամբ, ինչը նշանակում էր, որ երկիրը՝ այսինքն Միությունը և նաև միութենական հանրապետությունները ամեն ինչ անում էին ճնշելու այլախոհական շարժումը, որը նշանակում էր թույլ չտալ մարդկանց ասելու ճշմարտությունը, արտահայտելու իրենց կարծիքը:

Եվ որքան էլ հանրապետության ղեկավարությունը դաժանորեն էր վարվում այլախոհների նկատմամբ, միևնույն է, կանգնեցնել այդ շարժումը հնարավոր չեղավ, որն էլ իր դերը կատարեց՝ փոխելով մարդկանց մտածողությունը և թույլ չտալով կուլ գնալ իշխանությունների վարած քաղաքականությանը:

Իսկ դա նշանակում էր պայքարել ճշմարտության հաղթանակի համար, որը որքան էլ դժվար, բայց անհրաժեշտ էր: Անհրաժեշտ նաև մեր օրերի համար, որի մասին հեղինակը որևէ բան չի ասում, երևի ղեկավարվելով այն սկզբունքով, որ այն դուրս է իր թեմայի

շրջանակներից: Մինչդեռ կարծում ենք, որ վերը ասած միտքը առնչվում է ձեր թեմայի հետ ու որքան էլ հպանցիկ, բայց պետք էր անդրադառնայիք:

Ասելով դա նաև ավելացնենք, որ այդ հաջողված գործում մեծ վաստակ ունի իր գիտական ղեկավար՝ Էդիկ Մինասյանը:

Հավելենք նաև, որ հեղինակը որքան էլ քաջածանոթ է քննարկվող թեմայի վերաբերյալ եղած բազմաթիվ աղբյուրների, աշխատությունների և այլն, բայց նաև խորհուրդ կտայինք ծանոթանալ մեր կողմից վերջերս հրատարակված երկու մենագրությունների հետ՝ Հայաստանի անկախացման հասարակական, քաղաքական նախադրյալները և կայացման սկիզբը (1956 թ. փետրվար -1991 թ. սեպտեմբեր, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2019 թ.) և Հարավկովկասյան հանրապետությունների անկախությունը հետխորհրդային ժամանակաշրջանում (Երևան 2024 թ.), որոնցում քննարկվող հարցերը առնչվում են վերոնշյալ թեմային և ծանոթանալը կարծում ենք օգտակար կլիներ:

Բայց անկախ այդ ամենից, ասենք, որ Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի քննարկմանը ներկայացրած ձեր աշխատանքը գրված է հարցի խոր իմացությամբ և արժանի է ձեր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին, որի համար էլ միջնորդում ենք Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Պատմության ինստիտուտի Գիտական խորհրդին՝ շնորհելու Ձեզ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին դուք արժանի եք:

26.05.2025 թ. ՀԵՆՐԻԿ ՄՈՒՇԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր